Գործն սկսվեց նրանից, վոր կուսակցությունը ծավալեց լայն ինքնաքննադատություն, կենտրոնացնելով մասսաների ուշադրությունը մեր չինարարության թերությունների վրա, մեր հիմնարկների և կազմակերպությունների բացերի վրա: Դեռևս 15-րդ համադումարում հայտարարվեց ինքնաքննադատության ուժեղացման անհրաժեշտությունը: Ե՛ր կողմից Շախտիի դործը և վնասարարությունն արդյունաբերության զանազան բնագավառներում, վորոնք յերևան բերին հեղափոխական հոտառության բացակայությունը կուսակցության առանձին ողակներում և մյուս կողմից կուլակության դեմ մղվող պայքարն ու մեր դյուղական կազմակերպություններում. հայտարարված թերությունները, դարկ տվին ինքնաքննադատության հետագա ծավալմանը: Կենտկոմը 1928 թ. հունիսի 2-ի իր դիմումի մեջ տվեց ինքնաքննադատության կամպանիայի վերջնական ձևակերպումը, հրավիրելով կուսակցության և բանվոր դասակարգի բովանդակ ուժերին ծավալել ինքնաքննադատությունը «վերից վար և վարից վեր», «ուշադրություն չդարձնելով անձնավորությունների վրա»: Սահմանադատվելով արոցիկիստական «քննադատությունից», վորը բարեկաղների մյուս կողմից է դնում և նպատակ

ունի վարկաբեկեւ և թուլացնել խորհրդային իշխանութիւնը, կուսակցութիւնը հայտարարեց, Վոր ինքնաքննադատութեան խնդիրն և անդիմ կերպով բաց անել մեր աշխատանքի թերութիւնները, բարելավելու համար մեր շինարարութիւնը, ամբապնդելու համար խորհրդային իշխանութիւնը: Հայտնի յե, Վոր կուսակցութեան կողմ կենդանի արձագանք դտալ բանվոր դասակարգի և գյուղացիութեան մասնաների մեջ:

Այնուհետև կուսակցութիւնը կազմակերպեց լայն կամպանիա բյուրոկրատիզմի դեմ պայքարելու համար՝ լողունգ ունենալով մաքրել, գտել կուսակցական, պրոֆմիութենական, կոոպերատիւ և խորհրդային կազմակերպութիւններն անհարադատ և բյուրոկրատացած տարրերից: Այդ կամպանիայի շարունակութիւնն և հանդիսում կենտկոմի և ԿՎՀ-ի 1930 թ. մարտի 16-ի հայտնի վորոշումը, բանվորներին պետապարտում առաջ քաշելու և խորհրդային ապարատի վրա բանվորական մասնակցան կոնտրոլի մասին (գործարանների շէֆութիւնը): Հայտնի յե, Վոր այդ կամպանիան առաջացրեց բանվորական մասնաների հակապական վերելք և ակտիւթիւն: Այդ կամպանիայի արդշունքն և հանդիսանում կուսակցութեան հեղինակութեան վիթխարի վերելքն աշխատավորական մասնաների մեջ, բանվոր դասակարգի վստահութեան աճումը կուսակցութեան հանդեպ, հարյուր հազարավոր բանվորների կուսակցութեան մեջ մտնելը, բանվորների բանաձևերն ամբողջ ցեխերով ու գործարաններում կուսակցութեան մեջ մտնելու ցանկութեան մասին: Վերջապես այդ կամպանիայի արդշունքն և հանդիսանում մեր կազմակերպութիւնների ազատազրումը մի շարք համառ ու բյուրոկրատական ելեմենտներից, ՀՍՄԿՍ-ի ազատազրումն սոցիոտեխնիտական հին դեկաւարութիւններից:

Այնուհետև կուսակցութիւնը կազմակերպեց սոցիալիստական լայն մրցակցութիւն, աշխատանքի մասալյական վերելք ֆարրիկներում և գործարաններում: Սոցմրցակցութեան մասին կուսակցութեան 16-րդ կոնֆերենցիան այդ գործը դրեց ուղիների վրա:

Հարվածային բրիգադներն առաջ են շարժում այն: Լենինյան կամքերիստիւթիւնը և նրա կողմից դեկաւարող բանվոր յերիտասարդութիւնը վճռական հաջողութիւններով են պակում սոցմրցակցութեան և հարվածայնութեան գործը: Պետք և խոստովանել, Վոր մեր հեղափոխական յերիտասարդութիւնն այդ գործում բացառիկ դեր խաղաց: Այժմ արդեն չի կարող վորեւե կասկած լինել, Վոր մեր շինարարութեան ամենակարեւոր փաստերից մեկը, յեթե վոչ ամենակարեւոր փաստը տվյալ շրջանում հանդիսանում և ֆարրիկների ու գործարանների սոցիալիստական մրցակցութիւնը, հարյուր հազարավոր բանվորների կանչը ձեռք բերած արդշունքների մասին սոցմրցակցութեան ասպարիզում, հարվա-

ծայնութեան լայն զարգացումը: Միայն կույրերը չեն տեսնում, Վոր մասնաների հոգեբանութեան և դեպի աշխատանքը նրանց վերաբերմունքի մեջ կատարվեց հակապական բեկում, Վորն արմատապես փոխեց մեր ֆարրիկների ու գործարանների տեսքը:

Մոտիկ անցյալում մեզ մոտ դեռ ձայներ ելին լավում սոցմրցակցութեան և հարվածայնութեան վերաբերյալ «խորհելու» և նրա «անկարողութեան» մասին: Այժմ այդ «խմատունները» չեն արժանանում նույն իսկ հաղորանքի, նրանց համարում են ուղղակի, իրենց դարն ասրած «խմատուններ»: Այժմ մրցակցութեան և հարվածայնութեան գործը հանդիսանում և նվաճած ու ամբապնդած գործ: Սա փաստ և, Վոր մեզ մոտ սոցիալիստական մրցակցութեամբ ընդգրկված են յերկու միլիոնից վոչ պակաս բանվորներ, իսկ հարվածային բրիգադների մեջ ներգրավված միլիոնից ավել բանվորներ:

Ամենից նշանակալիցը մրցակցութեան մեջ այն և, Վոր նա արմատական հեղաշնդում և կատարում մարդկանց հայացքների մեջ դեպի աշխատանքը, վորովհետև նա՝ պախարակելի և ծանր բեռից, ինչպես համարվում էր առաջ, աշխատանքը վերածում և, դարձնում պատվի գործ, փառքի, պանծալիութեան և հերոսութեան գործ: Նման բան չկա և չի կարող լինել կապիտալիստական յերկրներում: Այնտեղ, նրանց մոտ, կապիտալիստների մոտ ամենացանկալի գործը, Վորն արժանանում և հասարակական համակրանքի՝ ունենալ ունտա, ալրել տոկոսներով, ազատ լինել աշխատանքից, Վորն արհամարված դրաղմունք և համարվում: Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, ընդհակառակն, ամենից ցանկալի գործը, Վորն արժանանում և հասարակական համակրանքի, դառնում և աշխատանքի հերոս լինելու հնարավորութիւնը, հարվածայնութեան հերոս լինելու հնարավորութիւնը, շրջապատված հարգանքի պակով միլիոնավոր աշխատավորների մեջ:

Մրցակցութեան մեջ վոչ պակաս նշանակալից պետք և համարել այն փաստը, Վոր նա սկսվում և տարածվել նաև գյուղում, գրավելով մեր կոլտնտեսութիւններն ու խորհտնտեսութիւնները: Բոլորին հայտնի յեն կոլտնտեսականների և խորհտնտեսականների միլիոնավոր մասնաների իսկական աշխատանքային ենտուղիաղմի բազմաթիւ փաստերը:

Մբանից յերկու տարի առաջ ո՞վ կարող էր յերադել մրցակցութեան և հարվածայնութեան այսպիսի հաջողութիւնների մասին:

Կուսակցութիւնն այնուհետև մորիլիզացիայի յենթարկեց յերկրի ֆինանսական միջոցները, ծավալելու համար խորհտնտեսութիւնների և կոլտնտեսութիւնների գործերը, խորհտնտեսութիւններին մատակարարեց լավագույն կազմակերպիչներ, կոլտնտեսութիւններին ոգնութիւն տվեց 25 հազար առաջավոր բանվորներ, կոլտնտեսական գյուղացիներից առաջ քաշեց լավագույն մարդկանց կոլտնտեսութիւնների դե-

կալար աշխատանքներում, այսպիսով հիմք դնելով կոլտնտեսական շարժման կայուն և փորձված կադրերի պատրաստմանը:

Վերջապես կուսակցությունն իր սեփական շարքերը վերակառուցեց մարտականորեն, վերադինեց մամուլը, կազմակերպեց պայքարը յերկու ճակատի վրա, ջանջալից արոցկիզմի մնացորդները, գլխավորն ջարդ ու փշուր արեց աջ ուղիւնիստներին, չեղոքացրեց հաշտվողականներին, այսպիսով ապահովեց իր շարքերի միասնականությունը լենինյան գծի հիման վրա, վրոն անհրաժեշտ և հարձակողականի հաջողություն համար, կիրառել հարձակողականի ճիշտ դեկամարությունը, ձգելով և իրենց տեղը դնելով ինչպես աստիճանական դարգացման կողմնակիցներին՝ աջ լազերից, այնպես էլ «ձախ» խոտորոգներին» կոլտնտեսական շարժման բնագավառում:

Սրանք են կուսակցության հիմնական միջոցառումները, վոր կիրառում և նա ամբողջ ճակատով հարձակողականը կատարելու համար:

Բոլորին հայտնի չե, վոր այդ հարձակողականը հաջողությամբ պսակվեց մեր աշխատանքների բոլոր բնագավառներում:

Ահա թե վորտեղ և պատճառն այն բանի, վոր մեզ հաջողվեց հաղթահարել մեր ժողովրդական տնտեսության վերակառուցման շրջանի մի ամբողջ շարք դժվարությունները:

Ահա թե վորտեղ և պատճառն այն բանի, վոր մեզ հաջողվում և հաջողությամբ հաղթահարել մեր շինարարության ամենամեծ դժվարությունը, գյուղացիության հիմնական մասնայի՝ դեպի սոցիալիզմի կողմը շրջադարձի դժվարությունը:

Ոտարեկրացիները յերբեմն հարցնում են ԽՍՀՄ-ի ներքին դրություն մասին: Բայց մի՞թե կարող և կասկած լինել այն բանում, վոր ԽՍՀՄ-ի ներքին դրությունն ամուր և ու անսասան: Նայեցեք կապիտալիստական յերկրներին, ճգնաժամի և գործադրկության ամմանն այդ յերկրներում, գործադուլներին ու լուծառանքներին, հակակառավարական ցույցերին—ի՞նչ համեմատություն կարող և լինել այդ յերկրների և ԽՍՀՄ-ի ներքին դրության միջև:

Պետք և խոստովանվել, վոր Խորհրդային իշխանությունն այժմ հանդիսանում և ամենաամուր իշխանությունը աշխարհում գոյություն ունեցող բոլոր իշխանություններից:

Ստալին—Կի—ի քաղհաշվետվությունը Համ Կ(բ)Կ-ի 16-րդ համագումարում:

Իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից հանդիսանում և տնտեսության սոցիալիստական ձևերի անման և պրոլե-

տարիատի կուլտուրական անման նախադրյալը, վորը վերակերտում և իր սեփական բնությունը, հասունանում և դառնում հասարակության սուսնորդը կյանքի բոլոր ասպարեզներում, վերամշակման այդ ընթացքի մեջ ներգրավում մնացած դասակարգերին և դրանով հոգ ստեղծում հաղթահարելու համար դասակարգերին ընդհանրապես:

Յոմունիստական Ինտերնացիոնալի ծրագիրը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Մշակիր «Կապիտալիստների և խորհրդային պետության ազգային ֆադաֆականությունը», «Ընդդեմ ազգային բռնամտության, հանուն ազգերի կամավոր միության» հատվածները և ցույց տուր՝

ա) Վճռն եր ինֆակալության ազգային ֆադաֆականությունը.

բ) Ո՞ւմն է ձեռնառն ազգային բռնամտությունը և ի՞նչ նպատակով էր նա բորբոքվում.

գ) Ի՞նչպես է լուծված ազգային հարցը խորհրդային Միության մեջ:

2. «Լենինյան ազգային ֆադաֆականությունն ու նրա նվաճումները ևՍՀՄ-ում» հոդվածի համաձայն վորոշիր, թե ինչ արին և ինչ են անում կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը վոչնչացնելու համար ազգային անհավասարությունը:

3. Մշակիր 17-րդ կուսկոնֆերենցիայում ընկ. Կուլբիշևի արտասանած ճառից «Շինարարությունն ազգային հանրապետություններում յերկրորդ հնգամյակին» հատվածը և ցույց տուր, թե յերկրորդ հնգամյակում ի՞նչպես կանի տնտեսությունը (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ) ազգային հանրապետություններում:

4. Քարտեզի վրա գտիր ընկ. Կուլբիշևի ճառում մատնանշված հանրապետություններն ու ֆադաֆները:

5. «Կուսակցության պայքարը բեֆումների դեմ ազգային հարցում» հատվածի համաձայն, վորոշիր այդ բեֆումների էյությունն ու նրանց դեմ պայքարի անհրաժեշտությունը:

ԿԱԴԻՑԱԼԻՍՏՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամերիկյան բանվորական պատգամավորության ընկ. Ստալինի հետ ունեցած զրույցի ժամանակ պատգամավորությունն ի միջի այլոց ասվեց հետևյալը՝

«Վորոնք են հիմնական տարբերությունները Ռուսաստանի և կապիտալիստական պետությունների միջև դեպի ազգային փոքրամասնությունները նրանց ունեցած քաղաքականություն խնդրում»:

Ընկ. Ստալինն այսպես պատասխանեց այդ հարցին՝

— Ըստ յերևույթին խոսքը վերաբերում է ԽՍՀՄ-ի այն ազգություններին, վորոնք առաջ ճնշվում, հարստահարվում եյին ցարիզմի և ուսական չահագործող դասակարգերի կողմից և վորոնք չունեյին իրենց պետականությունը:

Հիմնական տարբերությունը կայանում է նրանում, վոր կապիտալիստական պետություններում գոյություն ունի ազգային ճնշումն ու ազգային ստրկացումը, իսկ մեզ մոտ, ԽՍՀՄ-ում արմատում վոչնչացրած է թե մեկը, և թե մյուսը:

Մեզ մոտ բոլոր ազգություններն իրավահավասար են, վորովհետև առաջներում տիրապետող վելիկոուսական ազգության պետական արտոնությունները վոչնչացված են:

Իհարկե, խոսքը վերաբերում է վոչ ազգային հավասարության մասին յեղած դեկլարացիաներին:

Ազգային հավասարության մասին դեկլարացիաները քիչ չեն ամեն մի բուրժուական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների մոտ: Ի՞նչ արժեք ունեն դեկլարացիաները, յեթե կյանքում չեն կիրառվում:

Գործը վերաբերում է նրան, վոր վոչնչացվեն այն դասակարգերը վորոնք հանդիսանում են ազգային ճնշման կրողները, ստեղծողներն ու կիրառողները:

Այդպիսի դասակարգեր եյին մեզ մոտ կարվածատերերը, կապիտալիստները: Մենք կործանեցինք այդ դասակարգերը և հենց դրանով վոչնչացրինք ազգային ճնշման հնարավորությունը:

Յեւ հենց նրա համար՝ մենք կործանեցինք այդ դասակարգերը, մեզ մոտ հնարավոր յեղավ իսկական ազգային հավասարությունը: Հենց դա յեւ մեզ մոտ կոչվում է ազգերի ինքնորոշման դադափարի իրադործումը՝ մինչև բաժանումը:

Իսկապես, վորովհետև մենք իրադործեցինք ազգերի ինքնորոշումը, հատկապես այդ պատճառով եւ մեզ հաջողվեց վոչնչացնել ԽՍՀՄ-ի տարբեր ազգությունների աշխատավոր մասսաների փոխադարձ անվստահությունը և կամավորության հիմունքներով միացնել ազգությունները մեկ միութենական պետության մեջ:

Ներկայումս գոյություն ունեցող Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը մեր ազգային քաղաքականության

աղբյուրն է և ԽՍՀՄ-ի ազգությունների մեկ միութենական պետու-
թյան մեջ հոգաբարձի կերպով ֆեդերացիան արտահայտությունը:

Դժվար թե կարիք լինի ապացուցելու, Վոր նման քաղաքականու-
թյունն ազգային հարցում անխնայ է կապիտալիստական յերկրներում,
վերստին աշխատելով դեռևս իշխանության գլուխ են կանգնած կապիտա-
լիստները, վերստին ազգային ճնշման քաղաքականության կիրառողներն
ու ստեղծողներն են:

Ձի կարելի չնշել, որինակ՝ այն փաստը, վար ԽՍՀՄ-ի բարձրագույն
մարմին՝ Սոցիալիստական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի գլուխ է
կանգնած վոչ անպայման ուսումնական, այլ վեց նախագահներ, միու-
թենական վեց հանրապետությունների թվի համաձայն, վերստին միաց-
ված են ԽՍՀՄ-ի մեջ, վերստին մեկը ուսումնական (Կալինին), մյուսն ուղ-
իայինացի (Պետրովսկին), յերրորդը բելոստ (Չերվյակովը), չոր-
րորդն աղբյուրներ (Մուսաբեկովը), հինգերորդը թուրքմեն (Այաթով-
վը) վեցերորդն ուղբեկ (Փեյզովա Խոջան):

Այս փաստը հանդիսանում է մեր ազգային քաղաքականության վայ-
րուն արտահայտություններից մեկը:

Չարժե նույնիսկ խոսել, վոր վոչ մի բուրժուական հանրապետու-
թյուն, թեկուզ ամենապոռնիկատականը, այդպիսի քայլ չէր անի:
Մինչդեռ այդ քայլը հանդիսանում է մեզ համար ինքնին հասկանալի մի
փաստ, վորը բոլորում է ազգային հավասարակշռության մեր վողջ քաղա-
քականությունից:

ԼԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԶԻ ՆՐԱ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Ամբողջ աշարհը վկա յե սոցիալիզմի հաղթական շինարարության
փայլուն դեմոնստրացիային մեր յերկրում և կապիտալիզմի վախճանին:

Վողջ աշխարհի աշխատավորության հայրենիքը՝ ԽՍՀՄ-ն ամրա-
նում է որեցոր, իսկ կապիտալիզմի հիմքը՝ ճեղք-ճեղքվում է բոլոր
կցվածքներով: Յեթե այնպիսի կապիտալիստական յերկրներ, ինչպի-
սիք են ՀԱՄ Նահանգները, Անգլիան, Գերմանիան ճգնաժամի առնչու-
թյամբ 30—40 տարով յետ են չարտված, ապա Սոցիալիզմի Միության
աշխատավորներն արդեն ավարտել են սոցիալիստական եկոնոմիկայի
հիմքի կառուցումը, իրենց առաջ դնելով այժմ յերկրորդ հնգամյակի
վերջում սոցիալիզմի կառուցման խնդիրը:

Մարդկային պատմության մեջ չտեսնված այն նվաճումները, վոր
մենք ունենք Սոցիալիզմի Միության մեջ, առանձնապես նկատելի յեն
մեր ազգային հանրապետություններում, ինքնավար մարդերում և ազ-
գային չրջաններում:

Կուսակցության և կառավարության ճիշտ ազգային քաղաքականու-
թյան հետևանքով առաջներում ճնշված բոլոր ազգությունների աշխա-
տավորներն արագ տեմպերով դուրս են գալիս հետամնաց վիճակից և
տարեց-տարի հասնում վիթխարազույն հաջողությունների տնտեսու-
թյան և կուլտուրայի բոլոր ընդգնացումներում:

Ազգային հանրապետություններում և մարդերում կառուցվում են
նոր արդյունաբերական ոջաններ, ստեղծվում է արդյունաբերություն-
ը—գյուղատնտեսության սոցիալիստական վերակազմության բաղան:

Միջին Ասիայում վերջին տարիների ընթացքում աճել են գլխի քա-
նակությամբ գործարաններ ու ֆաբրիկներ: Բամբակի արդյունաբերու-
թյան նոր շինարարության վրա ծրագրված է հնգամյակի ընթացքում
ծախսել 97 միլիոն 500 հազար ռուբլի (Աղբյուրներում և Տաշիկատա-
նում 75 միլիոն ռ., Թուրքմենստանում 18 միլիոն 800 հազար ռ. և Կիր-
գիզիայում մոտ 4 միլիոն ռ.): Այժմ արդեն գործի յեն զգված մանածա-
ղործական կոմբինատը Ֆերգանում և Աշխաբադում, ձեթի գործարան-
ները Սամարղանդում, Կաթիլ-Կարգանում, Ֆերգանում և Չարջույում
մի շարք խոշոր բամբակաղտիչ գործարաններ և այլն: Հնգամյա պլանից
դուրս Տաշիկատում սկսված են խոշոր սեքտիլ կոմբինատի և ալյուրի
գործարանի շինարարական աշխատանքները: Միջին Ասիայում ծախս-
վում է նավթի արդյունաբերությունը: Մեծ աշխատանքներ են տարվում
զարգացնելու յերկաթուղային հաղորդակցության ճանապարհները:

Առանձին ազգությունների տեսակարար կշիռը ԽՍՀՄ-ում

(Տ ո կ ո ս ն ե ռ ո վ)				
53 ռուսներ,	21 ուկրաին- ցիներ,	3 բելոսու- սներ,	2,7 կազակներ,	2,6 ուզբեկներ
10				
Թաթարներ, հրեաներ, վրացիներ, թուր- քեր, հաչեր, մոնղոլներ, գերմանացիներ, չուվաշներ, (յուրաքանչյուր ազգություն 1-ից մինչև 5 միլիոն մարդ)				2,7 մոսցա 150 ժո- ղովուրդներ

Չափազանց արագ տեմպով աճում է կապիտալի ինդուստրացու-
մը: Ներդրումները գունավոր մետաղների արդյունաբերության մեջ
(Ռիդգեր, Կարսակցալ, Տուրլանյան կապար) ընթացիկ հնգամյակի հա-
մաձայն հավասար է 243 միլիոն ռ.: Նավթի արդյունաբերության մեջ
այս հնգամյակում գրվում է 350 միլիոն ռ.: Չարջանում է քիմիական,
ֆոսֆորիտի, աղի և կաուչուկի արդյունաբերությունը: Չեռնարկված
է քարածխային հանքանյութային մշակմանը (Կարգանդա): Արդեն
գործում է հոջակավոր թուրքախրը և կառուցվում են նոր յերկաթու-
ղային գծեր:

Այսպիսով Կազակստանի արդյունաբերության հիմնական դրամագլխի կմեծումն առկա է Բան 5-ամգամ, այն ժամանակ, յերբ Միութան արդյունաբերության հիմնական դրամագլխի միջին ամուսնը հասնում է 289%-ի:

ԱՍՖՆՀ-ի 1931 թ. ընդհանուր արտադրանքը 1922 թ. համեմատությամբ, մեծացել է տասն անգամ, երկտրոկայանների ու ժեղքողների 92 հազար կիլոգրամից հասել է մինչև 161-300 կիլոգրամի, նավթի հանույթի նախապատերազմյան 7278 տոննից, 1931 թվին արդեն հասել է 13 միլիոն 443 հազար տոննի:

Ներկայումս ԲՍՍՀ-ն ունի այնպիսի խոշոր ձեռնարկներ, ինչպես Վորոշիլովի անվան «Նեմեդիա» գործարանը, «Բայրախի» Փարբիկը, Բարրուսիկի փայտամշակման կոմբինատը, Գոմսեմաշը, Մինսկի և Վրեսնիի կարի գործարանները, արհեստական մանրնի գործարանը և այլն:

Արդյունաբերության հանդիմանումը զարգացումը նպաստեց պրոլետարիատի կազմակերպչական արագ աճմանը բնիկ արդյունաբերության:

Յեթե նկատի առնենք այն դրուժյունը, վոր արդային շրջանները խորհրդայնացման շունենալով համարյա վոչ մի արդյունաբերություն, ապա այդ բնագավառում մեր ձեռք բերած խոշոր հաջողությունները:

Միութենական հանրապետությունների 1931 թ. բյուջեյի ամուսնը 1930 թ. համեմատությամբ (տոկոսներով)

46 ԽՍՀՄ-ի	31 ՌՍՖՆՀ-ի	33 ՈՒՍՖՀ-ի	51 ԱՍՖՆՀ-ի	62 ՈւզՍՖՀ-ի
Ընդհանուր բյուջեն	բյուջեն	բյուջեն	բյուջեն	բյուջեն
87 ԹուրքՍՖՀ-ի	109 ՏաճՍՖՀ-ի	36 ԲՍՖՀ-ի		

խորհրդային Միությանը խոշորագույն հաջողությունների հասավ նաև պրոլետարիատական պրոլետարիատական վերակազմության ասպարեզում: արդային հանրապետություններում և ինքնավար մարզերում:

Տվյալների համաձայն 1931 թ. վերջին, գյուղացիական տնտեսությունը կոլեկտիվացման ժեղքողների մեջ ընդգրկելու տեսակետից միութենական բոլոր հանրապետություններից առաջ և կանգնած ՈւՍՖՆՀ-ը—67%, իրերից առաջը գրավում է ՈւզՍՖՀ-ը—66%, ՌՍՖՆՀ-ում կոլեկտիվացած է 61%-ը, ԹուրքՍՖՀ-ը—56%-ը, ԱՍՖՆՀ-ում—39,6%-ը (Սղեր-մեջանում 43%, Վրաստանում 40%, Հայաստանում 32%), ԲՍՖՀ-ում

48%-ը, ՏաճՍՖՀ-ում 28%-ը: Կան այնպիսի ազգային մարզեր, ինչպես Ադրբեյջան, վորտեղ հիմնականում ավարտված է համառարած կոլեկտիվացումը:

Կոլեկտիվացումն արդային շրջաններում, ինչպես նաև ամբողջ Միության մեջ կատարվում է մեքենա-տրակտորային և մեքենա-խոտհարքային կայանների ցանցի լայն ծավալման և ազդեցության շնորհիվ: 1931 թվին վերջերին ազգային հանրապետություններում և մարզերում ստեղծված է 675 ՄՏԿ (ամբողջ խՍՀՄ-ում յեղած 1400 ՄՏԿ-ի բնիկանուր քվից):

Ժողովրդական տնտեսության հեղափոխական նվաճումները մեր յերկրում հնարավորություն տվին մեզ ամբողջ լայնությամբ դնել կուլտուրական հեղափոխության սրբոլման արդային հանրապետություններում: Արագորեն ծավալվում է տարրական, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հիմնարկների ցանցը: Մենք արդեն կանգնած ենք ընդհանուր ուսուցումը մացնելու և անգրագիտության վերացման շեմին:

Գյուղացների և դպրոցականների ամուսնը Կազակստանում

1914 թվին կար 70 դպրոց 4000 դպրոցականով:

1930 թվին դառավ 614 դպրոց 52-000 դպրոցականով:

Միայն 1931 թ. ընթացքում բոլոր ազգային հանրապետություններում ուսուցմամբ ընդգրկված են այնքան անգրագիտներ, վորքան սովորել էին մինչ այդ 10 տարվա ընթացքում: Կան արդեն համառարած դրագիտություն արդային շրջաններ, ինչպես Ադրբեյջան և ուրիշներ:

Ուսուցումը տարրական դպրոցներում, հազվադեպ բացառությամբ տարվում է մայրենի լեզվով: մայրենի լեզվի յեն անցել ուկրայնցի-դպրոցականների 93,9%-ը, վրացիների 98,1%-ը, ուզբեկների 96,9%-ը, թուրքերի 95,5%-ը, թաթարների 95,7%-ը:

Արագ տեմպով զարգանում են կուլտուր-կրթական հիմնարկները և արդային արվեստը: Ուժեղացրած տեմպերով աճում է սրբերական և վոչ պարբերական մամուլը, ինչպես յույս տեսնող հրատարակությունների անունների քանակի տեսակետից, այնպես եղ թերթերի, թվի և տիրածի քանակով:

Արամտացվում է մտցվում է նոր լատինացրած այբուբեն, դիր սղրականություն չունեցող կամ թե առաջներում բարդ գրեր ունեցող ժողովուրդների միջև, վորը հեշտացնում է կուլտուրական հեղափոխական հաղթական արշավը:

Այսպիսով, արդային հանրապետությունների աշխատավորներն, ինչպես հարկն է, ձեռնարկեցին սեփական կուլտուրայի ստեղծմանը— «ձեռով արքային» բովանդակությամբ, պրոլետարական կուլտուրայի ստեղծմանը:

Ձեռք ազգային, բովանդակութեամբ պրոլետարական այդ կուլտուրայի շինարարութեանն իրադրութիւնը և համառ պայքարում ընդդէմ բուրժուական և ազգայնական տարրերի, ընդդէմ մեզ թշնամի դասակարգային գաղափարախոսութեան:

Վերը բերած բոլոր փաստերն ամենափայլուն ապացույցն են այն բանի, Վոր մեր կուսակցութեանը և խորհրդային իշխանութեանը ձեռք են առնում բոլոր միջոցները գործնականում իրականացնելու անհալած արեւելեան փաստացի վերացումը և Վոր ազգային շրջաններն, ինչպէս Խորհրդային մեծ Միութեան մասերը, դնում են դեպի սոցիալիզմ: Ընկ. Լենինի հռչակաւոր թեզն այն մասին, թե «յետամնաց շրջանները կարող են անցնել սոցիալիզմի, առանց զարգացման կապիտալիստական շրջան ապրելու», սոցիալիստական շինարարութեան պրակտիկայում, լիովին արդարանում և ազգային շրջանների նկատմամբ:

Ընկ. Ստալինն այսպէս եր ասում մեր ազգային քաղաքականութեան մասին՝ «Բաներ նրանումն է, Վոր մեր հանրապետութեանները Միութեան վրա վողջ Արեւելքը նայում և ինչպէս մի փորձադաշտի վրա: Կամ մենք այս Միութեան սահմաններում ճիշտ կլուծենք ազգային հարցի գործնական կիրառումը, կամ մենք այստեղ, այս Միութեան սահմաններում կհաստատենք իսկական յեղաշրջական հարաբերութեան ժողովուրդների միջև, իսկական համագործակցութեան և այն ժամանակ վողջ Արեւելքը կտեսնի, Վոր հանձին մեր Ֆեդերացիայի նա ունի ազատագրման դրոշմ, ունի առաջափոր շուկա, Վորի հետքերով նա պետք է դնա և դա կլինի համաշխարհային կապիտալիզմի վոչնչացման սկիզբը: Կամ թե, մենք այստեղ, մեր Ֆեդերացիայի կամում թույլ կտանք սխալներ, ողբ կցընդենք դեպի Ռուսաստանի պրոլետարիատն ունեցած, առաջներում հարստահարված ժողովուրդների հալածանք և վստահութեանը, հանրապետութեանների Միութեանից կիսենք այն ձգողական ուժը, Վոր նա ունի Արեւելքի աչքում—և այն ժամանակ իմպերիալիզմը կհաճի, մենք կտարաբնակ: Սրանումն է ազգային հարցի միջազգային նշանակութեանը:

Մենք, Խորհրդային իշխանութեան գոյութեան վողջ ժամանակաշրջանում, լենինորեն լուծեցինք ազգային հարցը, և հենց դրանով դառանք ձգողական ուժն աշխարհի բոլոր պրոլետարների և ճնշված ժողովուրդների համար: Ազգային հարցի մեր գործնական լուծումը լավագույն պատասխանն է ազգային հակահեղափոխական գրգռարարութեանների և աշխատավոր մասսաներին ճնշող կապիտալիստներին:

Ինչո՞ւմն է հաջողութեանների պատճառը:

Պատճառը՝ կուսակցութեան և նրա կենտրոնական կոմիտեի ճիշտ գծի մեջ է, Վորի գլուխ է կանգնած Լենինի լավագույն աշակերտ և ազգային հարցի լավագույն տեսաբան ընկ. Ստալինը:

Պատճառը՝ կուսակցութեան վարած վճռական և անողոր պայքարի մեջ է, Վորը տարվում է ընդդէմ դասակարգային թշնամիների, նրանց գործակալներին—աջ և «ձախ» ուղիւնիստների, մեծապետական չովինիզմի և սեղական նացիոնալիզմի դէմ մղվող պայքարի մեջ:

Պատճառը վերջապէս՝ ազգային հանրապետութեանների բանավոր դասակարգի և աշխատավոր մասսաների որ ավուր աճող քաղաքական ակտիվութեան և հերոսութեան մեջ է, Միութեան պրոլետարիատի առաջափոր մասի նրան ցույց տված ոգնութեան մեջ է:

Ա. Տալիյեվ—ԽՍՀՄ-ի կենտրոնական ազգութեանների խորհրդի քարտուղար:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՁԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՐԿՐՈՐԴ ՀԸՆԴԱՄՅԱԿԻՆ

ՈՒԿՐԱՅԻՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ուկրայինան մնում է Միութեան խոշոր արդյունաբերական և հողագործական շրջանը, շարունակելով զարգանալ հենց նույն ուղիներով, ինչ նշված է ին առաջին հնգամյակի համար:

Քարածուխի հանույթը Դոնբասում աճում է մինչև 110—120 միլիոն տոննի, կառուցվում են նոր էլեկտրակենտրոններ, վարոնցով ավարտվում է մոտ 3½ միլիոն կիլովատ ուժ ունեցող Ուկրայինա—Հյուսիսային Կովկասի եներգոտակը, չուգունի արտադրութեանը Հարավում աճում է մինչև 11 միլիոն տոննի, այսինքն, չնայած, Վոր Ուկրայինան վորոշ հատվ կորցնում է թե քարածուխի և թե չուգունի արտադրութեան իր տեսակարար կշիռը, չուգունի և քարածուխի համար աճման այնպիսի տեմպ է վերցվում, Վոր Ուկրայինային դարձնում է այնչափով ինդուստրիալ շրջան, Վոր նա կմշակի ավելի մետաղ, քան մեր վողջ յերկիրը 1932 թ.:

Ուժգնորեն աճում է քիմիական արդյունաբերութեանը, մանավանդ ազոտինը, Փոսֆորային պարարտանյութերի արտադրութեանը:

Վիթիարի չափերով աճում է վորական պողպատների արտադրութեանը մեքենաշինարարութեան համար, Վորը պետք է առանձնապէս վճռականորեն ընդգծվի:

Ուժեղ կերպով բարդավաճում է մեքենաշինարարութեանը, լեռնագործային սարքավորումը, Վորը պետք է արտադրվի հին և նոր Կրամատորյան գործարաններում, չոգեկառքերի շինարարութեանը, Վորը պետք է իրադրվի հին և նոր Լուգանսկի գործարանում և ԽՇԳ-ում, վազոնաշինարարութեանը՝ «Պրավդա»-յի անվան գործարանում, նախա-

չինարարութիւնը՝ Նիկոլասիի գործարանում, տրակտորաշինարարութիւնը, ելեկտրոմեքենաշինարարութիւնը՝ Ուեեսայի, Սեփատոսովի գործարաններում և Մարիուպոլի նոր գործարանում:

Քիմիական ապարատուրան պետք է արտադրվի գլխավորապես Կիևի «Բոյլչէիկ» գործարանում, պետք է ծավալվի չաքարի գործարանների ստորափորման արտադրութիւնը:

Թեթև արդյունաբերութիւնը բնագալառում զարգանում են չաքարի, կանեփի, թելի, մսի և նոր բամբակագործական շրջաններում բամբակի արդյունաբերութիւնը:

Լրիվ գործողութիւնը պետք է աշխատեն Դնեպրի հիդրոէլէկտրակայանը և Դնեպրի կոմբինատը, վորը՝ հսկայական ուժանակութիւն կլինի Սորհրդային Միութեան տնտեսութեան մեջ և խիստ կվիովի վողջ Ուկրայինայի եկոնոմիկան:

Յերկաթուղիների զարգացումը գնալու յե ելեկտրոֆիկացիայի, յերկրորդ ուղիներ գցելու, վազոնները տեսակավորելու, կայարանների սարքավորման և յերկաթուղային նոր շինարարութեան դժուր:

Ուկրայինայի գյուղատնտեսութիւնը պետք է զարգանա այն ուղղութիւնով, ինչ յեղել է մինչև այժմ, այն է՝ հացահատիկային, ցորենի տնտեսութեան հետ զուգընթաց Ուկրայինան պետք է մեծացնի տեխնիկական կուլտուրաների արտադրութիւնը թե չաքարի ճակնդեղի, թե կանեփի և թե բամբակի բնագալառներում:

ԲԵԼՈՌՈՒՍԻԱ

Բելոռուսիայի տնտեսութեան զարգացումը յերկրորդ հնգամյակում պետք է հիմնվի տորֆի, անտառանյութի ոգստագործման և գյուղատնտեսութեան ինտենսիվ զարգացման բաղայի վրա:

Բելոռուսիայի գյուղատնտեսութեան հիմնական ուղղութիւնն է մթերատու անասնապահութիւնը, թուխարուծութիւնը, տեխնիկական կուլտուրաները, մասնավորապես կտավատը և կարտոֆիլը:

Թեթև ինդուստրիայի համար այդ հումուլթի բաղայի խոշոր աճումը հնարավորութիւն է ստալիս նախագծել ինչպես սննդի, այնպես ել կտավատի ասպարեզում մշակող արդյունաբերութեան նշանակալի զարգացումը:

Մեծանում է տորֆահանութիւնը: Բելոռուսիայի ընկերները նախագծում են տորֆորմիական գործարանի կառուցումը: Այդ հարցը նույնպես պետք է լրացուցիչ կերպով քննարկվի: Զարգանում է ելեկտրոնների գիտի արտադրութիւնը տորֆով:

Արդյունաբերական շինարարութեան առանձին ձեռնարկներից պետք է նշել շինարարութիւնը տորֆորմիայի ասպարեզում, թղթի գործի

ասպարեզում, վայտամշակման ասպարեզում, վայտաքիմիական արտադրութեան, կտավատի սկզբնական և հետագա մշակման (մանելու, գործելու) ասպարեզում:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

Անդրկովկասը հիմնականում պետք է զարգանա այն ուղիներով, վորոնք նշլած են արդեն առաջին հնգամյակում, մասնավորապես նրա գյուղատնտեսութիւնը պետք է ընթանա այն տեխնիկական կուլտուրաների զարգացման ուղիով, վորոնք յուրահատուկ են տեղական կլիմային՝ նախ և առաջ բամբակի և մի ամբողջ չարք ուրիշ ստորափորման կուլտուրաների՝ թեյ, ռամի և ուրիշների արմատացումը:

Միանգամայն ալններե և, վոր այնպիսի կուլտուրաների զարգացման խնդիրը, ինչպես խաղողը, նարինջը, մանգարինը, նույնպես պետք է կանգնեն Անդրկովկասի առաջ այնպես, ինչպես լիմոնի պլանտացիաների զարգացման խնդիրը:

Յեա չեմ կարծում, թե հարկավոր է այնպես արհամարհանքով վերաբերվել դեպի այդ կուլտուրաները, վորովհետեւ, համենայն դեպս, մենք այս հնգամյակում այնպիսի գրութիւն կունենանք, յերբ վոչ խաղողը, վոչ նարինջը և վոչ մանգարինը ճոխութեան իրեր չեն համարվի, այլ կլինեն մասսայական սպառման առարկաներ, և այդ կուլտուրաների վրայի աշխատանքը Միութեան վողջ ժողովրդական տնտեսութեան տեսակետից չափազանց կարեւոր աշխատանք է Անդրկովկասի համար:

Սոչոր արդյունաբերութեան զարգացումն Անդրկովկասում շատ ինտենսիվ պետք է դնա, վորի հետեանքով մենք կունենանք այդ յերկրի նշանակալի ինդուստրացումը:

Նավթի հանուլթն Անդրկովկասի նոր շրջաններում պետք է հասնի 10 միլիոն տոննի (բացի Բազվից): Կարող է պատահել, վոր այդ նախագծումը շատ մեծ է. իհարկե նա պետք է յենթարկվի ավելի ու ավելի ստուգման, սակայն դրա համար այնտեղ հնարավորութիւններ կան:

Քարածուխի հանուլթն Անդրկովկասում հասնում է 3 միլիոն տոննի (Տկվարչիլի պլուս Տկվիրուլի), զարգանում է լեռնահանածոների արդյունաբերութիւնը, գունավոր մետալուրգիան, պղինձը Զանգեզուրում, ալումիններից՝ ալյումինի Ագրբեջանում, զարգանում է այն հանուլթի վերամշակման թեթև արդյունաբերութիւնը, վորն արտադրվում է Անդրկովկասի տերիտորիայում:

Առանձնապես խոշոր նշանակութիւն է ստանում Դաշքեսանի մետալուրգիական գործարանի կառուցումը, վորը չուգունի արտադրութեան հետ միասին կունենա խողովակների ցեխ, մատակարարելու համար խողովակներ Բազվի և առհասարակ Անդրկովկասյան նավթարդյունաբե-

րութեանը, իսկ մյուս կողմից մետաղ կտա Անդրկովկասում յեղած բա-
վականին խոշոր մեքենաշինարարութեանը, վորն աննկատելի կերպով
մեծացավ առաջին հնգամյակի ընթացքում (Շմիդտի անվան գործարանը
և այլն) :

Քիմիայի բնագավառում կառուցվում են ֆոսֆորիտային և ադոմային
պարարտանյութերի ձեռնարկներ :

Խոշոր զարգացում է ստանում շինանյութերի արդյունաբերու-
թյունը—ցեմենտ, տուֆ և այլն :

Տեկատվելի զարգանում է բամբակի և մետաքսի արդյունաբերութեան
ուղղութեամբ :

ԱՍՖՈՆ-ն հզոր ենթակառուցվածքային բաղա յե ստանում շնորհիվ մի շարք հիդ-
րո-էլեկտրակայանների : Իրրե հնարավոր կետեր յես կանխանում Հերդե-
րը, Մինդեգաուրը, Սրամը, Խոսի-Գյումուշը և մյուսները :

Տրանսպորտի խնդիրները ելեկտրոֆիկացիայի խնդիրներով չեն
սպառվում : Ըստ յերևույթին այնտեղ կարիք կլինի կառուցել միջանի-
լրացուցիչ յերկաթուղիներ :

ՄԻՋԻՆ ԱՍԻԱ

Միջին Ասիան (ուր բացի Ուզբեկստանից, Տաջիկստանից և Թուրք-
մենստանից յես մտցնում էմ նաև Կիլիկիայի և Կարա-Կալապիան)՝
վերջնականապես վերակազմվում է յերբեմնի յետամնաց ցարական իմ-
պերիալիզմի գաղութից և դառնում ԽՍՀՄ-ի բամբակի մատակարարման
հիմնական աղբյուրը : միաժամանակ նաև ինդուստրիալ կենտրոնը, վորն
ապահովում է Միջին Ասիայի ընակչութեան սպառման հիմնական ապ-
րանքներով և նույնիսկ ԽՍՀՄ-ին մատակարարում արտադրական սպառ-
ման շատ կարևոր առարկաներ :

Ենթակառուցվածքային վրա, ինչպիսին է քարածուխը, վորի հանույթը
1937 թ. պետք է հասնի 10 միլիոն տոննի, նավթը, վորի հանույթը հըն-
գամյակի վերջին պետք է լինի 3 միլիոն տոնն և մի շարք հիդրոէլեկտրա-
ները—Չիրչիկ, Բախչ և միջանի ուրիշները—զարգանում է գունավոր
մետաղների—պղինձ, ցինկ, կադար, —քիմիական, ամենից առաջ սըլս-
մրված ադոմի քիմիան, —զարգանում է հանածոների հանույթը՝ ծծումբ,
ոնդիլի, ադրեստ, բարիում, մկնդեղ, արճիճ, լաթուարթ (լյապիս—լա-
դուրի), հելիա, վորը հարկավոր է ոդապարիկների համար և այլն :

Բամբակադործութեան աճման հետ միասին բարգավաճում է շերա-
մապահությունը, զենքերի ու կենսաֆի ցանքերը, ավելանում է կաու-
չուկաբեր բույսերի տարածությունը :

Մնում է անասնապահությունը : Ստեղծված գյուղատնտեսութեան
հումույթի բաղա յի վրա կառուցվում են շրջի գործարաններ, զենքերի

կոմբինատ, բամբակի կոմբինատ՝ մեծ հզորութեամբ, մետաքսի նոր
գործարաններ, շաքարի և կոնսերվի գործարաններ և այլն, և՛ այլն :

Մեծ խնդիրներ են կանգնած յերկաթուղային շինարարութեան առ-
պարկից : Այնտեղ ծրագրվում է կառուցել մի շարք նոր մագիստրալ-
ներ :

ԿԱԶԱԿՍՏԱՆԻ ԽՍՀ

Կազախստանի ԽՍՀ-ն շարունակում է յետամնաց շրջանից վերածվել
ու դառնալ ԽՍՀՄ-ի արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան խո-
շոր կենտրոն, վորտեղ մինչև 15 միլիոն տոնն քարածուխի հանույթ ունե-
ցող Կարադենդի վառելանյութի շրջանի զարգացման բաղա յի վրա, ելեկ-
տրոենթերիայի բաղա յի վրա աճում է գունավոր մետաղների—կոբալ-
տա, Ջեզկազգոնը, Ալտայի գործարանը, Ռեդդերը, Կազալյումետալը
և այլն, զարգանում է քիմիան, մասնավորապես ծծմբաթթվի արտա-
դրությունը :

Կազախստանում պետք է ձեռնարկվի խոշոր յերկաթուղային շինա-
րարութեան :

Ծրագրվում են այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են Կարական-
դա—Բախչաչ, Բախչաչ—Չու, Կարականդա—Մեմիսպալատինսկ և մյուս-
ները : Ավելանում է բամբակի և ուրիշ տեխնիկական կուլտուրաների
արտադրանքը, մասնավորապես կաուչուկաբերները :

Հագահատիկային կուլտուրաների զարգացման հետ միասին ստեղծ-
վում է սոցիալիստական խոշոր անասնապահություն :

Հումույթի աղ բաղա յի վրա կառուցվելու յեն առաջին հերթին բամ-
բակի գործարաններ, շաքարի գործարաններ, կաշվի, կանեփ-պարկերի,
բրդի ձեռնարկություններ, կոնսերվի գործարաններ և այլն :

ԲԱՇԿԻՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Տեղավորված է Ուրալում և սերտորեն կապված Ուրալ—Կուզնեցկի
կոմբինատի հետ : Բաշկիրիայի հանրապետութեան մեջ զարգանում է
խոշոր արդյունաբերությունը :

Այն մետաղների արտադրությունը, վորը կա այնտեղ ի դեմս
Բելորեցկու գործարանի, ավելացվում է մի նոր ուժեղ գործարան—Կո-
մարսով—զիգադինսկին, վորն ունի բոլոր հիմքերը մանելու յերկրորդ
հնգամյակի մեջ և ավարտվելու յերկրորդ հնգամյակում :

Սակայն, բացի դրանից զարգանում է նաև գունավոր մետաղու-
րիան : Այդ հումույթի բաղա յի վրա նպատակահարմար է Բաշկիրիայում
ուժեղ տեմպով սկսել զարգացնել մեքենաշինարարությունը :

Հատ յերևույթին այնտեղ կկառուցվի ելեկտրոքարշների գործարանը, յերկաթուղիների վերակառուցման համար:

Այնտեղ է կառուցվելու մոտորի խոշոր գործարանը: Յերևի յերբ քննելու լինենք կաթսա-տուրբինային մեծ գործարանի կառուցման տեղի հարցը, շինարարության կեսը կընտրվի Բաշկիրիայում:

Դրա հետ միասին աճող գյուղատնտեսության բազայի վրա զարգանում է թեթև և սննդի ինդուստրիան:

ԹԱԹԱՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրվում է այնտեղ կառուցել սինտետիկ կաուչուկի գործարանը, հավանական է ավիացիոն մոտորների գործարանը, ցեմենտա-թթուական ճարպի կոմբինատը Կամի գետաբերանում, համապատասխան հումուլթի հիման վրա, ծրագրվում է կառուցել թանձրացյալ զանգվածների գործարանը, ինչպես յերևում է նաև փայտամշակման և առհասարակ փայտանյութերի գործը:

Այդ ձևանարկներն ու գործարաններն հենդիան ստանալու յեն Վոլ-ժսկո-Կամսկիյ հիդրոկայանից:

Կուլբիշև. — XVII կուսկոնֆերենցիայում տված ղեկուցումից:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԱՅԲԱՐԸ ԹԵԳՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՍԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ

Վելիկոուսական շովինիզմի թեքման ելույթյունը կայանում է նրանում, վոր ձգտում են ուշադրության չառնել լեզվի, կուլտուրայի, կենսադի ազգային տարբերությունները, ձգտում են նախապատրաստել ազգային հանրապետությունների և մարզերի լիկվիդացիան, փորձում են խզել ազգային իրավահավասարության սկզբունքը և ջլատել անարատի ազգայնացման, մամուլի, դպրոցների և տեսական ու հասարակական ուրիշ կազմակերպությունների ազգայնացման վերաբերյալ կուսակցության քաղաքականությունը:

Դիվար չե հասկանալ, վոր այդ թեքումը (դեպի մեծապետական չովինիզմը) արտացոլում է վելիկոուսական ազգի, առաջնորդում տիրապետող, դասակարգերի ձգտումը, վերադարձնելու իրենց կորցրած արտոնությունները:

Այստեղից վելիկոուսական շովինիզմի վտանգը դիտավոր վտանգն է կուսակցության մեջ ազգային հարցի աստվարիզում:

Տեղական նացիոնալիզմի թեքման ելույթյունը կայանում է առանձնանալու և իր ազգային կեղևի սահմաններում պարփակվելու ձգտումի

մեջ, իր ազգի ներսում դասակարգային հակասությունները մթաղնելու և մարելու ձգտումի մեջ, սոցիալիստական շինարարության ընդհանուր հեղեղից հեռանալու միջոցով վելիկոուսական շովինիզմից պաշտպանվելու ձգտումի մեջ, աշխատել չտեսնել այն, ինչը մոտեցնում է միացնում է ԽՍՀՄ-ի ազգությունների աշխատավոր մասսաներին և տեսնել միայն այն, ինչը կարող է հեռացնել մեկը մյուսից:

Թեքումը դեպի տեղական նացիոնալիզմն արտացոլում է առաջնորդ ձնչված ազգերի հալից ընկած դասակարգերի դժգոհությունը պրոլետարիատի դեկտատուրայի ուժից, վորոնք ձգտում են առանձնանալ իրենց ազգային պետության մեջ և այնտեղ հաստատել իրենց դասակարգային տիրապետությունը:

Կուսակցությունը պետք է սաստկացնի պայքարը յերկու թեքումների դեմ ազգային հարցում և հաշտվողականության դեմ, միաժամանակ ուժեղացնելով ուշադրությունը գործնականորեն կիրառելու լենինյան ազգային քաղաքականությունը, վերացնելու ազգային անհավասարության տարրերը և լայնորեն զարգացնելու Խորհրդային Միության ժողովուրդների ազգային կուլտուրան:

Ստալին:

Մենք ազգային թշնամության, ազգային անհավասարության, ազգային առանձնացման հակառակորդներ ենք: Մենք միջազգայնականներ ենք, ինտերնացիոնալիստներ: Մենք ձգտում ենք աշխարհի բոլոր ազգերի բանվորներին ու գյուղացիներին միացնել և լիովին թուլել միացյալ համաշխարհային Խորհրդային հանրապետության մեջ (Լենին):



ՀՀ Ազգային գրադարան



NL0201175

Դրա հետ միատիեռն աճող գյուղատնտեսության բաղադրի վրա ղարկա-
նում է թեթև և սննդի ինդուստրիան :

Տեղական նաղբոնայիղմի թեքման ելությունը կայանում է առանձնանայու և իր ազգային կեդևի սահմաններում սլարիակիլելու ձգտումի

Մենք ազգային թշնամության, ազգային անհավասարության, ազգային առանձնացման հակառակորդներ ենք: Մենք միջազգայնականներ ենք, ինտերնացիոնալիստներ: Մենք ձգտում ենք աշխարհի բոլոր ազգերի բանավորներին ու դյուզազիներին միացնել և լիովին թուլել միացյալ համաշխարհային Սօցիալիստական հանրապետության մեջ (Լենին):



NL0201175

42.357

gm

gm 1

gm 2

